

ՖՐԻՏՈՖ ՆԱՆՍԷՆ

Մեռաւ Ֆ. Նանսէն ալ. մէկիկ մէկիկ կ'անհետանան ամէնքն ալ որոնք յետ պատերազմի երեւոյղ զաղթականութեան զառնութիւնը ուզեցին մեղմացնել. Նանսէն աւելի մօտէն փարեցաւ այդ մարդասիրաւ կան գործին, կարծեց անոր մէջ գտնել իր երջանկութիւնը, իր գոյութեան նպատակը. սառուցեալ բեւեռներու եւ անսաման ովկիանոսներու խորհուրդը հրմայած էր իր երկտասարդի սիրտը. ցաւին խորհուրդը՝ ցաւ մը արդիւնք մարդկային անհզր սառնութեան, հմայեց իր ծերացեալ բայց գորովող եւ յուզուող սիրտը, եւ կեանքին վերջին տարիները նուիրեց այդ մարդասիրական գործին:

Ուսումնաստեն չմը՝ պարագիւղ բնապատմական գիտութիւններու, իր նկարագրի յատկութիւններով, մանաւանդ անյողողող հաստատամտութեամբ, արիութեամբ և կորովով ցոյց տուաւ իր հոգիի մեծութիւնը 1893ին բեւեռախոյզ ճամբորդութեամբը, որ երեք տարի տեւեց, և ուր այդ անվերջ սառնասպիտակ ամայութիւններուն մէջ յածեցաւ և թափառեցաւ ի խնդր գիտական իրականութեան, նման անոնց որ անուաղ և մենացեալ կը տընին ի խնդր գերագոյն ճշմարտութիւններու. Նանսէն այն օրէն վերջ հանրածանօթ դար-

ձաւ. Դէպք մը՝ Շուէտի Նորվեկիայէն բաժանումը, գինը մղեց քաղաքական ասպարէզ. անկից նորէն գիտութեան ծոցն ինկաւ և հուսկ պատերազմի և յետպատերազմի ընթացքին բարեգործական ասպարէզին մէջ: Որքան գերադաս համարած էր բեռներու և ովկիանոսներու հետազոտութիւնը քաղաքական սեւէ գործառնութենէ, նոյնքան կրնայ ըսուիլ թէ նախասիրեց բաւարար ծական ասպարէզը միւս բոլոր գործունէութիւննէն, ու անով ամէնուն սիրելի դարձաւ. ինքն ինք զիւցազ մը յայտնուի իր գիտականի և բեռնախալդի կեանքին մէջ, աւելի մեծ զիւցազ մըն է իր մարդասիրական գործին մէջ. գիտութիւնը գինը առաջնորդեց գորովելու բնութեան վրայ. պատե-



ՖՐԻՏՈՖ ՆԱՆՍԷՆ

լագմը այդ գորովը սաստկացուց և աւելի ջերմացուց և ուղղեց մարդկային տառապանքին, ամոքելու և մեղմացնելու զայն, ու զայս կատարեց լիարուս և անխըտրաբար առանց զանազանութեան ազգի և ցեղի, կազմակերպելով յետ պատերազման շրջանին պարենաւորումը Ռուսաստանի և ուրիշ երկիրներու, և անոնց տարագրեալներու վետեղման գործը:

Նանսէն կապուած է նաեւ միւս ազգին հետ. ծանօթ է ամէնուն այն դերը զոր

ստանձնեց և կատարեց հաւատարմօրէն հայ գաղթականութեան ի նպաստ: Դրական միտք մը՝ իր մարդասիրական գործին մէջ ալ դրաւ իր միտքը, իր առարկայական մեքտորը, իր փորձառութիւնը և փութանակ խոստումներու, իրականութիւն պահանջեց Ազգերու Դաշնակցութենէն, գործադրելու համար իր մտադրած ծրագիրը, որ կը կայանար բուն հայրենիքի հողամասին մէջ՝ համախմբելու ժողովուրդը, այս զիտումով կը ջանար տնտեսապէս ու ժեղցնել Հայաստանը, որպէս զի ան կարեւնայ ամփոփել այնքան ցիրուցան բազմութիւնը. անձամբ ալ ճամբորդեց Հայաստան իրր գլուխ յանձնախումբի մը, քննելու երկրին վիճակը, ուսումնասիրելու այն միջոցները՝ որ կրնային ձեռնտու ըլլալ իր նպատակին կատարման և մտադրած բարւոքումներուն գործադրութեան. այսպէս ծրագրուեցաւ Սարդարապատի շրջանին ուղղման ձեռնարկը, որպէս զի այդ անապատ գաւառը բարեբեր դարձած՝ ընդունի գաղթականներու աւելի մեծ թիւ մը: Սոյն ճամբորդութեան քննութեանց իբր արդիւնը ունեցանք հատոր մը «Հայաստան և Մերձաւոր Արեւելք», ուր ըրաւ իր ամբողջ ուղեւորութեան նկարագրութիւնը:

Միաժամանակ գաղթավայրերու հայեւրու վիճակին բարեւաւումն ալ իր գործունէութեան մէկ մասը կազմեց: Իրմով անոնց կրցան ունենալ կեանքի և ապահովութեան մասնական դիւրութիւններ, գոնէ կարենալու համար պահել տեսակ մը գոյութեան վիճակ: Իր անուարը դարձեալ

երեւան ելաւ ինքնութեան թուղթ մըն ալ, տալու գաղթավայրերու հայերուն որոնք ունէ հպատակութենէ զուրկ էին: տեսակ մը քաղաքական հանգամանք: Այսպէս իր անունը զօդուած մնաց մեր տարագրութեան պատմութեան, ու ինք կատարեց սփոփիչ դեր մը սպիտակ ջարդին մասնունած հայ ցիրուցան բեկորներուն:

Նանսէն որքան վեհանձն, որքան մարդասիրական բարձր գաղցումներով բոցավառ, միշտ չգտաւ նոյնքան առատածեռն և ինքնամեծ հոգիներ Ազգերու Դաշնակցութեան ծոցին մէջ, ուր պատուիրակները կ'երթային մի միայն իրենց ազգերը ներկայացնելու և ոչ ուրիշ բանի, և քանի՜ անգամներ բուռն ոգիով և ազատ համարձակաբոսութեամբ պաշտպանեց իր տեսակէտը և հաւածուածներու դատը, ու գործնական միջոցներ պահանջեց. սակայն իր կեանքին անձնուէր ողջակիզման փութան՝ խեղճերուն ի նպաստ, գտաւ պետութեանց կողմէ մի միայն եաստը շահամոլութիւն. որով դառնացած եւ մտալ անոնց ցուրտ և շնական վերաբերումէն, մտածեց նորէն վերադառնալ գիրկը բնութեան՝ որ աւելի զթոտ եղած էր իրեն հանդէպ քան մարդիկը: Բախտը ուրիշ կերպով իրագործեց իր այդ գաղափարը. և հիմայ աւելի սերտօրէն փառած բնութեան, կը պատմէ հողի սեւութեան թէ մարդիկ իրենց բնոյթը երբեք չեն փոխած:

Հայ ազգը միշտ յարգանքով պիտի յիշէ Նանսէնի անունը:

Հ. Կ. ՔՐԻՍՏԻԱՆ

